ցան յունաստանէն գերեվարած կուռքերի համար։

Արտաշէս առաջին Ասիայէն Հայաստան ղրկեց Արտեմիդեայ Հերակլեայ եւ Ապողոնի պղնձաձոյլ, ոսկեզօծ արձանները. զորոնք քուրմապետները դրին յԱրմաւիր ուր Աղարշակ մեհեան շինած էր, սակայն Արտաշիսի մահուանէն ետքը կարծելով թէ Հերակլէի արձանը Վահագնին է, որոնք Վահագնի ազգականութէն էին եւ կ'կոչվէին Վահունիք, տարան Տարօն եւ կանգնեցին յԱշտիշատ իրենց գիւղի մէջ։

Դարձեալ Արտաշէսի կենդանութ ժամանակը յԵլլադայէն Հայաստան ղրկեց Դիոսի, Արտեմիդեայ, Աթենասայ, Հեփեստոսի եւ Ափրոդիտեայ պատկերները իրենց քուրմերովը մէկ տեղ. որք ճանապարհին լսելով Արտաշիսի մահը, յիշեալ կուռց պատկերները տարան յամրոցն ասացեալ Անի որ դարձեալ Տարօն գաւառի մէջն է, եւ այն տեղ մնացին։

Իսկ Տիգրան Արտաշիսի որդին քան զհայրն աւելի կռատունները շատցուց Հայաստանի մէջ, որով աւելի կերեւի նորա կրօնասիրութիւնը եւս, սորա օրով էր որ յունաց կողմերէն գերեվարեալ քուրմերը Հայաստանի ներսերը չուզելով երթալ իբրեւ ՚ի դիցն պատգամաց յամուրն Անի կենալ ուզեցին. Տիգրանն ալ կանգնեց անդ Դիոսի Ողիմպիական պատկերը. Թիլն աւանի մէջ դրաւ Աթենասայ կուռքը. յԵրիզա հաստատեց Արտեմիդեայ պատկերը, եւ ՚ի Բագայառիճ Հեփեստոսին։

---

Հետեւեալ ողբերգութիւնը հանդերձ այլ մի քանի ոտանաւոր հանելուկներով եւ նոյին ոտանաւոր բացատրութիւններով Շամախիէն յուղարկուած է մեզ տպելու խնդրանօք.

## ՈՂԲԱԼԻՑ ԲԱՆՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԻՑ ՄԵՅՍԱՐՈՒ, ՈՐ Ի ՎԻՃԱԿԻՆ ՇԱՄԱԽԻՈՅ.

Ով Հայ պատանի, քո գալուստ բարի
Այս սուրբ մենաստան, որ ի Մեյսարի.
Արդեօ՛ք, կ'բերե՞ս ինձ մի լուր բարի,
Թէ անճար անտէր դեռ լամ շատ տարի
իբրեւ զգերի.

Դիտեմ ողբա՛կս, կզգաս եւ դու
Մորմոքը որտիս, բառաչս անձայն,
Եւ մինչեւ անգամ եղերերգու բու
Կտեսնես գլխուս, որ կձայնէ վա՜յ....
առաքինի Հայ....

Զուհիմ պաշտպաններ, նախնի սուրբ Հայրեր,
Վաղեմի գրած առաս իշխաններ,
Որոնք մեծ յուսով նիդին ու գանձեր,
Զոհել են ինձի արժանի զոհեր,
տուրք բարեբեր.

Յանժամ ծնկաչոք դասք ուխտաւորաց
Առատ պարգեւօք էին արտաքաց.
Բայց արդ իմ աչաց կաթիլք արտասուաց
Կ՚առնեն իմ տխուր սուրբ յատակս բաց,
տամուկ Տրտմագգեայ.

Ո՞ւր են իմ զարդեր կարմիր ծիրանի,
Ուր թագք մարգարտեայ, զգեստք բեհեզեայ,
Որով օրհնութիւն, աղօթք զոլանի
Լինէին անհաս հանապազորդեայ.
ոփրով մտակայ.

Ո՞ւր են խնկս տուփ, բուրվառս արծթից,
Ուր սուրբ ալէլու՛, դասք միաբանից.
Դոցա փոխարէն չղջիկք գաւճէլի
Արդ սուրբ պատերիս վերայ լի են լի,
ձեւով ահռելի.

Ո՞ւր են իմ արօրք, ուր քաջ մշակներ,
Որք մշակէին բեղմնաւոր սերմեր,
Ուր արտն այժմ, ուր իմ ճոխ հունձեր,
Որք տային ինձի գեղեցիկ խուրձեր,
յաճախ պտղաբեր.

Ո՞ւր են անդեայս, պտղաւէտ այգիս,
Ուր են լուծք եզանց, ուր եւ նժոյգ ձիս,
Որք ծնանելով մի ուրախ կեանք յիս,
Առիթ բերկրութեան ձօնէին սրտիս,
տալով գեղարիս.

Ո՞ւր է սառնորակ եւ ականակիտ,
Գեղեցկայարմար աղբիւրս վճիտ,
Ուր շատրուանս միշտ կարկաչասահ,
Երբ զիմ զկեանս կարծէի անմահ,
Թշնամուց անահ

Դու աստ կտեսնես սրբազան հարանց
միայն յիշատակ փոշեաւ հնացած,
Որք թողեալ անտէր զիս ի սուգ, ի լաց,
փոխեցան յերկինս — ի կեանս անանց,
յօթեւանս խնդանց.

Երկար պատմելով քեզ իմ թախիծը,
դեռ շատանումէ սրտիս կսկիծը,
գնա՜, ընթացի՛ր դու դէպի յառաջ
Արագ քայլերով զառ ի վայր վազքաջ
գետոյն ընդ առաջ.

Գնա պատանի, դու Հայ պատանի,
Այդ ճանապարհաւ, ուր քեզ կտանի,
Անդ քո առաջեւ նրան կտեսնես,
Որ զիս կողբայ միշտ ցաւերով պէսպէս,
խոպան դառնալէս.

Յովհաննէս Միրզաբէկեանց,

Ի Յունիսի
ի 1868 ամի.
Ի ՎԱՆՍ ՄԵՑՍԱՐՈՒ.

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

### Մարդ էշ եւ Գայլ.

Մի մարդ իւր էշը կորսնցուցած էր, ուստի խիստ ա-պիտանի կը շրջէր եւ կփնտռէր. գայլը տեսնելով կը հարցանէ. ով մարդ զի՞նչ կը փնտռես. խեղճ մարդը կը պատասխանէ, ով գայլ իմ իշուկը կորսնցուցած եմ եւ չեմ գտնել. գայլը ես քո էշը գտայ կերայ. եւ երբ մարդը բե՛ր էշը եւ քո գտնելու փոխարէնը տամ. կը պատասխանէ գայլը. ո՛վ մարդ. քո էշը չամուռը ինկած էր, ու ես երէկ օր աշխատելէն զկնի հազիւ կարողացայ ի դուրս հանել. եւ վարձի տեղ էշը կերայ. որովհետեւ գիտէի որ աղքատ մարդ էիր եւ ինձ վարձ չէիր կարող տալ.

## ՀԱՆԵԼՈՒԿ

Դաշտ մի կայր արձակ ու լայն,
անախն ծփնուած էր, անզերան.
կանթեղքն 'ի կախ կան անշուան,
ջահերն անշէջ զլոյսն տան.
Կայր մի մաքուր անհովելի,
երիտասարդ մի ցանկալի
անմեղ կայթն ի միասին,
եւ աչ յարատ ինձ հայէին,
մինչեւ առիթ ումն եղեւ
զկապ կուսութեան նոցա եհեղ,
Ետ կերակուր նախ գազանին
եւ ինքն եմուտ յորովայնին.

Յունիս ամսոյ հանելուկն էր
Առաջինն՝ խախամարք,
Երկրորդն՝ ծառն գիտութեան բարւոյ եւ չարի։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՀՐԱՄԱՆԱՒ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.